ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 466

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Ագարակ քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Մեղրի համայնքի (Ագարակ քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքը (Ագարակ քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Ագարակ քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-002-0057-0049 կադաստրային ծածկագրով 0.3291 հա մակերեսով բնակավայրերի նպատակայի նշանակության այլ հողեր	09-002-0057-0049 կադաստրային ծածկագրով 0.3291 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների՝ արդյունաբերական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մեղրի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ագարակ քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի (Ագարակ քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «27» «նոյեմբերի» 2024 թ.